ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/53

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Բողոք բերող՝ «Էլիտ Էսվե» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Է. Իսկանդարյանի
Բողոք բերողի ներկայացուցիչներ՝ Հ. Ղազարյանի, Ա. Կիրակոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցում, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.07.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 02.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.7 կետով «Մ-ԲԻ-Ռ-» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 11.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

4. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 17.07.2019թ.-ն և 17.07.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 26.07.2019թ.-ին ու 06.08.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.08.2019թ.-ին:

2. «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար կազմակերպվել է ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունները:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է որոշում բոլոր չափաբաժինների մասով Ընթացակարգին մասնակության հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով 02.07.2019թ ժամը 11:00 բանակցությունների անցկացման վերաբերյալ, որին մասնակցել է միայն «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն և ներկայացրել նոր՝ նվազեցված գնային առաջարկ, ինչի արդյունքում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընկերությունը չի մասնակցել վերոնշյալ բանակցություններին, քանի որ համարել է դա ոչ իրավաչափ գործողություն հանձնաժողովի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունում բացակայում է Ընկերության հայտը մերժելու կամ նրան հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է որոշում համաձայն որի «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

12.07.2019թ Պատվիրատուի կողմից հրապարակվել է Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի Ընկերության հայտը ևս մերժված չէ, այնինչ եթե Ընկերության գնային առաջարկը գերազանցում է տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները ապա պետք է մերժվեր: Ընթացակարգի հրավերով սահմանված է, որ առաջին տեղ զբաղեցնող մասնակիցը որոշվում է հրավերի N3 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աղյուսակ 2-ում ներառված ապրանքների, նյութերի և ծառայությունների համար առաջարկված միավորի գների հանրագումարի համեմատմամբ, այսինքն այդ հանրագումարը ըստ հրավերի տրամաբանության նախատեսված է զուտ համեմատման համար, իսկ պայմանագիրը կնքվում է ոչ թե այդ հանրագումարի թվով այլ պատվիրատուի կողմից նախատեսված

ֆինանսական միջոցների շրջանակներում, ընդ որում՝ եթե շարժվենք Պատվիրատուի կողմից առաջարկված մոտեցումով, ապա աղյուսակ 2-ով սահմանված ցանկի բոլոր տողերը պետք է իրականացվեն մեկ անգամ, այսինքն պետք է լինի քանակ անգամ միավորի գին հարաբերակցությունը, ինչը չի բխում հրավերի տրամաբանությունից:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը կայացրել է ոչ համաչափ և խտրական որոշումներ ինչի հետևանքով խախտվել է Ընկերության մասնակցության իրավունքը և ոտնահարվել են նրա շահերը:

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչխարական հիմունքներով կազմակերպում.

պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 02.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.7 կետով «Մ-ԲԻ-Ո-» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 11.07.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

4. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին:

«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն 04.08.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով հարկադիր կատարումն ապահովող ծառայության տնտեսական բաժնի պետ Է.Դ. Իսկանդարյանի կողմից 26.07.2019թ թիվ 5330 գրությունը տեղեկացնում եմ, որ ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում սահմանված նախահաշվային գները և ներկայացված գնային առաջարկները հնարավոր չէ համեմատել իրար հետ, քանի որ դրանց գոյացման մեթոդները տարբեր են (օրինակ՝ ընթացակարգի հրավերով սահմանված է գնացուցակ (առանց ծավալների), որը պետք է լրացվի մասնակցի կողմից և կցվի գնային առաջարկին, մասնակիցը լրացնում է յուրաքանչյուր տողում առկա ապրանքների և ծառայությունների միավորի գները, իսկ գնային առաջարկում լրացնում է միավորի գների հանրագումարը (գնացուցակը կցվում է)), այսինքն պատվիրատուի հետ պայմանագիրը կնքվում է նրա կողմից պլանավորված գնով և ծառայությունները մատուցվում են այդ գումարի շրջանակներում (մինչև գումարի սպառվելը) ըստ պատվիրատուի պահանջի, իսկ պատվիրատուի կողմից հնչեցված դիրքորոշմանը համաձայն մասնակիցը պետք է իր առաջարկված գնացուցակում առկա բոլոր ծառայությունները մատուցի մեկ անգամ, ինչը չի բխում մրցույթի փրամաբանությունից և պատվիրատուի շահերից (օրինակ՝ եթե գնացուցակում գրված է յուղ 1լ և դրա համար առաջարկված է միավորի գին, ապա մասնակիցը պետք է ավոմեքենայի շարժիչը 1 անգամ լիցքավորի 1լ յուղով, իսկ պատվիրատուն ցանկանում է, որ պայմանագրի գնի շրջանակներում ծառայությունները մատուցվեն ըստ իր պահանջի, ոչ թե բոլոր ծառայությունները մեկ անգամ, այլ մինչև գումարի սպառվելը ցանկացած ծառայություն ցանկացած ծավալով (օրինակ՝ յուղը 10լ)):

Ընթացակարգի փրամաբանությունից ելնելով պարզ է, որ գնային առաջարկները կրում են զուտ համեմատական բնույթ մասնակիցների միջև և չեն կարող համեմատվել նախահաշվային գնի հետ կամ լինել որպես պայմանագրի գին:»:

3. <u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 19.07.2019թ. գրությամբ դիմել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը հնարավորություն տալով «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն դիրքորոշմանը կից ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, հայտնել է հետևյալը.

««Հարկադիր կատարումը ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ս/թ հունիսի 18-ին հրապարակել է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» գնման ընթացակարգ: Մինչև ընթացակարգի բացման վերջնաժամկետը 28.07.2019թ. ժամը 11:00 մասնակցության հայտ են ներկայացրել թվով 3 կազմակերպություններ՝ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն և «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև գնումների պլանով վերը նշված ծառայությունները բաժանված են թվով 7 չափաբաժինների՝ ըստ ավտոմեքենայի տեսակի, թողարկման տարեթվի և մոդելի յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանված է նախահաշվային գին կապված տվյալ չափաբաժնով նախատեսված ավտոմեքենաների քանակից:

28.07.2019 թվականին հայտերի բացման նիստի ժամանակ արձանագրվել է, որ վերը նշված թվով երեք կազմակերպությունների կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են չափաբաժիններով սահմանված նախահաշվային գինը և հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետով որոշել է կասեցնել նիստը, ծանուցել հայտ ներկայացրած մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման վայրի և ժամի վերաբերյալ, որը էլ. փոստի միջոցով ուղարկվել է մասնակիցներին: 02.07.2019թ.-ին բանակցություններին մասնակցելու ներկայացել է միայն «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն և ներկայցրել է նվազեցված գնային առաջարկը, ինչը և արձանագրված է հանձնաժողովի 02.07.2019թ.-ի թիվ 3-րդ արձանագրությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձան, գնման առարկա են հանդիսանում ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 7 չափաբաժիններում, իսկ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 50111130/13, 50111130/14, 50111130/15, 50111130/16 50111130/17, 50111130/18 և 50111130/19 կոդերը:

www.armeps.am/ppcm/ կայքում առկա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գնումների պլանի համաձայն՝ ԳՄԱ դասակարգման (CPV) 50111130/13, 50111130/14, 50111130/15, 50111130/16 50111130/17, 50111130/18 և 50111130/19 կոդերով նշված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների համար որպես ընդհանուր գումար համապատասխանաբար նշվել է՝ 956 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 239 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 239 000 ՀՀ դրամ և 239 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, որոշել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով ընթացակարգի նիստը կասեցնել և ֆինանսական միջոցները գերազանցող թիվ 1-7-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ վարել միաժամանակյա բանակցություններ՝ նշված չափաբաժինների մասով ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հետ:

Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար առաջարկել է 2500000 ՀՀ դրամ գնային առաջարկ, 2-րդ չափաբաժնի համար՝ 2760000 ՀՀ դրամ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների համար՝ 2540000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 1740000 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 2780000 ՀՀ դրամ և 7-րդ չափաբաժնի համար 2900000 ՀՀ դրամ:

«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար առաջարկել է 1675000 ՀՀ դրամ գնային առաջարկ, 2-րդ և 5-րդ չափաբաժինների համար՝ 1819000 ՀՀ դրամ, 3-րդ և 6-րդ

չափաբաժինների համար՝ 1685000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովն, առաջարկված գների նվազեցման շուրջ, որոշել է հրավիրել բանակցություններ և ծանուցել վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Հանձնաժողովի 02.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով իրականացվող գների նվազեցման շուրջ բանակցություններին ներկա էր միայն «Մ-ԲԻ-Ռ-» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում թիվ 1-7 չափաբաժինների մասով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն առաջարկել է նոր նվազեցված գնային առաջարկ, որի գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Մասնավորապես «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար առաջարկել է 956000 ՀՀ դրամ գնային առաջարկ, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների համար՝ 478000 ՀՀ դրամ, իսկ 4-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների համար 239000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության համաձայն՝ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն թիվ 1-7 չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 11.07.2019թ.-ի կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ թիվ 1-7 չափաբաժինների մասով «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

12.07.2019թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի կողմից 17.07.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող

բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ …:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-

րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հայտարարված «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձան, գնման առարկա են հանդիսանում ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 7 չափաբաժիններում, իսկ որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշվել է 50111130/13, 50111130/14, 50111130/15, 50111130/16 50111130/17, 50111130/18 և 50111130/19 կոդերը:

www.armeps.am/ppcm/ կայքում առկա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գնումների պլանի համաձայն՝ ԳՄԱ դասակարգման (CPV) 50111130/13, 50111130/14, 50111130/15, 50111130/16 50111130/17, 50111130/18 և 50111130/19 կոդերով նշված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների համար որպես ընդհանուր գումար համապատասխանաբար նշվել է՝ 956 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 239 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 239 000 ՀՀ դրամ և 239 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով ընթացակարգի նիստը կասեցնել և ֆինանսական միջոցները գերազանցող թիվ 1-7-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ վարել միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը 02.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն թիվ 1-7 չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, քանի որ վերջինս առաջարկել է նոր նվազեցված գնային առաջարկ, որի գինը բոլոր չափաբաժինների մասերով չի գերազանցում գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը 11.07.2019թ.-ի կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է թիվ 1-7 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին և 12.07.2019թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմցից www.armeps.am/ppcm/ կայքում առկա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության

գնումների պլանի համաձայն՝ ԳՄԱ դասակարգման (CPV) 50111130/13, 50111130/14, 50111130/15, 50111130/16 50111130/17, 50111130/18 և 50111130/19 կոդերով նշված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների համար որպես ընդհանուր գումար համապատասխանաբար նշվել է՝ 956 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 239 000 ՀՀ դրամ, 478 000 ՀՀ դրամ, 239 000 ՀՀ դրամ և 239 000 ՀՀ դրամ, որոնք նույնանում են «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի 1-7-րդ չափաբաժինների հետ:

Ընթացակարգին մասնակցած բոլոր երեք կազմակերպությունների կողմից համապատասխան չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն որոշել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն թիվ 1-7-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ վարել միաժամանակյա բանակցություններ՝ համապատասխան չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ:

Նշված բանկցություններին իր մասնակցությունն է ապահովել միայն «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցել գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչի արդյունքում կազմակերպությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող, ապա նաև ընտրված մասնակից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բանակցություններ հրավիրելով, գործել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթների շրջանակներում, գործողությունները իրավաչափ են, որպիսի պայմաններում չեն խախտվել Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/53 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**